

A row of five large, ornate initial letters in a Gothic script: 'U', 'B', 'U', 'R', and 'U'. Each letter is highly decorated with intricate patterns, including floral motifs, scrolls, and fine line work. The letters are set against a plain, light-colored background.

Գլուխը գացած լրագրաց ճանքու
ձողիցը խորհուրտ թեան վրայ է ։
Լրագրչայ վեհադիպեալ նամակ
կամ որևէ իցէ գրովի ինչ խորագիր
— չխորհիմն պիտի ուզուի, Գլխա-
թիկն Ստանդարտը չառաջնի թիւ
198, Նորո խան, Մասիս գրասեն-
եակի ։

ձնորու ձողիցը չլճարուած նա-
մակ չիկ ունի ։

ᠯᠠᠭᠤᠨ ᠤᠯᠤᠰ

Ռուսիոյ Եւրամեծիոյ հասխարհայր մեր

քաղաքն եկաւ : Կը հաւատեն թէ այս բարձրաստիճան անձին ուղեորութիւնն կըմտական նպատակներ ունի :

Վիկենա 24 հոկտ.

Նոր նախարարութեան կազմութիւնը զօրութեամբ կը հանդիսի :

Լոնտոն 24 հոկտ.

Նախարարաց խորհուրդը վաղը պիտի գումարի Աֆրիկայի նկատմամբ իրեն վրայ հարկեղած միջոցները խորհրդէ համար :

Բուսանիա պատասխան տուա Ռուսիոյ թէ զինուորական ճանաչ մ'իրեն բանալու առաջարկութիւնը չընդունիր :

Պէրլիտ 24 հոկտ.

Տրինայի Աերպիական զորաւանակը խաղաղութեան վիճակի մէջ զրուեցաւ :

Աղէքսանդրիա 24 հոկտ.

Խաղաղի և Յունաստանի հիւպատոսներն Եգիպտական կառավարութեան դէմ միջազգային ատենաներէ տրուած վըճուոյն գործադրութեանէ առաջ Եգիպտական միացեալ պարտուց տոկոսը մծա օրէն վճարելու տնօրէնութեան դէմ պաշտօնապէս բողոք մատուցցին Նուար փաշային :

Կը կարծուի թէ Աւստրիա ալ պիտի ձայնակցի այս բողոքին :

Ներդառն յորդումն 500,000 Անգլ. լիւրայի վնաս պատճառեց : Կըսուի թէ 250 հոգի ալ խեղդուեցին : Երկաթուղւոյն երթեկեւորութիւնն ընդմիջեցաւ :

Լոնտոն 24 հոկտ.

Վաղը գումարուելը նախարարական խորհուրդն Արեւելից մէջ Ռուսիոյ յարուցած զօրութեաններէն ծագած վիճակը պիտի քննէ, և Աֆրիկայի նը կառավարութեան ընդմիջեց վրայ պիտի խորհի :

Այս ամսուոյ հասած հետաքննիչ

Պոմպայ 25 հոկտ.

Կը հաւատեն թէ Աֆրիկայի նը միւրին պատասխանը քաղաքավարական է, բայց չուղեր անգլիական դեսպանութիւնը ընդունիլ և փափաք կը յայտնէ որ Անգլիոյ հետ գործ մը չունենայ :

Աղէքսանդրիա 25 հոկտ.

Ներդառն յորդումն 120 միոն տարածութիւն ծածկած են : Կարպիէի գաւառին քսան զիւղերը ջուրին տակն են : Հազարի չափ մարդ խեղդուեցաւ :

Վիկենա 25 հոկտ.

Պատուիրակութիւնը նոյեմբեր 7 ին ի ժողով հրաւիրուած են :

Լոնտոն 25 հոկտ.

Այսօր գումարեալ նախարարաց խորհրդին համար կըսուի թէ խիստ կարեւոր որոշումներ ըրած է :

Նիւ-Եօք 25 հոկտ.

Բուսն մորիկ մ'եկա Բէնիլիւանիոյ նահանգին մէջ և երկու միլիոն տղարի արժողութեամբ վնաս և կորուստ պատճառեց :

Լոնտոն 25 հոկտ.

Օսմ. Քանս.	40 13/16
Փոլս.	1865 14 1/4
»	1869 13 1/8
»	1871 49 1/4
»	1872 20 1/2
»	1873 11 3/4
» Եգիպտ.	69 1/2
Անգլ. Քանս.	94 3/16

Փարիզ 25 հոկտ.

Օսմ. Քանս. 11,05

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկուան թուրք լրագրաց մէջ հետեւեալ պաշտօնական ազգը տեսնուեցաւ .

« Վեհ. Սուլթանին հրամանաւ թղթադրամին առաջն առնող ազգու տնօրէնութիւն մ'ընելու համար Բ. Գուսն հետեւեալ որոշումն ըրաւ, որպէս զի թղթադրամին գինը բըռնուի մինչև որ բոլորովին չնջուի :

« Գաւառացի մէջ տասնորդի տըրք վարձակալը, որք վարձակալութեան գինն Օսմանեան իրայով վըճարելու մարհակ տուած են, այս օրէն սկսեալ պիտի կրնան թղթադրամով վճարել, երեք հարիւրոց թղթադրամ տալով մէկ լիւրայի փոխարէն : Տէրութեան անտուկներուն

ալ հրաման եղաւ որ այս հաշուով ընդունին :

« Եթէ թղթադրամն հրապարակի վրայ 300 լրայ տաւուի տրուի, տէրութեան անտուկներն ալ այն ժամանակ ըլլալիք որոշման համեմատ հրաման պիտի տանան՝ թղթադրամին նոյն գնէն 20 զըշ պակտի ընդունելու, այս ալ մինչև որ թղթադրամն իւր կանոնաւոր գինը գտնէ :

« Թէ և զրոյց կայ թէ կայսերական կառավարութիւնը գալ տարի թղթադրամ չպիտի ընդունի պիտուի որոց համար, կառավարութիւնը կը փութայ հրապարակել թէ մինչև որ թղթադրամը բոլորովին չնջուի, տէրութեան գանձը պիտի շարունակէ թղթադրամն իւր նշանակեալ գընդունիլ, որք նախատեսուած են թղթադրամի վրայ հաստատուալ օրինաց մէջ :

« Այս տնօրէնութիւնը կայսերական հրամանաւ հրատարակուելէ ետեւ՝ յատկապէս հետագայով ամեն գաւառացի կուսակալներուն և կառավարչաց ալ հաղորդուեցաւ : »

Երկրորդ պաշտօնական ազգ մ'ալ կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանն հրաման ըրիւ է որ մաքսի տրոց ալ հարիւրին 25ը թղթադրամ ընդունելի՝ երեք հարիւրոցը մէկ լիւրա հաշուելով :

Յունացի նորընտիր Յովակիմ Գ. Պատրիարքին ընտրութիւնը կայսերական հրամանաւ հաստատուելով, Վեհ. Սուլթանին հրամանաւ կայսերական պալատէն շնորհաւորութեան հետագիր մը գնաց Սերանիկ նորընտիր Պատրիարքին : Բ. Գուսն ալ Սերանիկի կուսակալին հետագրեց, որպէս զի Յովակիմ արքեպիսկոպոսը տիեզերական Պատրիարք ճանչելով, սովորական եղած պատիւներն ընէ անոր :

Կայսերական հրամանագիրը Սերանիկ տանող հրաւիրակներն այսօր Ֆրասինէի շոգենաւով պիտի մեկնին մայրաքաղաքէն :

Կ. Պոլսոյ քաղաքապետութիւնը կը ծանուցանէ թէ թղթադրամին անկման պատճառաւ հացին հօխան վեց զըշ երսուն փարայի երաւ :

Ֆիլիպէէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ Պուլղարիոյ կայսերական վերատեսուչ Տօնուքօֆ Քօրսաքօֆ իշխանն անցեալ երեքշաբթի իրիկուն ֆիլիպէէն Սօֆիա գնացեր է, Պուլղարիոյ իշխանութեան առժամանակեայ մայրաքաղաքը :

Ֆիլիպէէն մեկնած իրիկունը Պուլղարացի բարձր թաղերը լաւատարուեր և հրախալութիւններ եղեր են, Պուլղար երկրաւորքը ազգային երգեր երգելով մինչև երկաթուղւոյն կայարանն ուղեկից եղեր են իշխանին :

Սնյեւանները ծանուցեր էին թէ ֆիլիպէի խումբ բնակչաց երկելինքնէն Հաճի Արիֆ աղա՝ անուն մ'ե ուրիշ խումբ մը Քրիստոնեայ գիւղերու մէջ սպանութիւններ ըրած ըլլալու ամբաստանութեամբ ի մահ գատապարտուած էին ֆիլիպէի մէջ կազմուած պատերազմական ատենէ մը :

Բ. Գուսն վերջին գաշնադրութեան այն յօդուածին զօրութեամբ որ ընդհանուր ներգալթիւն կը շընորհէ, միջնորդելով Հաճի Արիֆին և ընկերին մահուան պատիժն ետ թողալ տուեր էր, բայց ֆիլիպէի Ռուսական իշխանութիւնը զանոնք չէր արձակած բանալէն :

Ֆիլիպէի թուրք լրագիրը կը ծանուցանէ թէ Տնտեսքօֆ Քօրսաքօֆ իշխանը ֆիլիպէէն Սօֆիա երթալով, յիշեալ երկու խումբներն ալ իւր հետ տարեր է :

Հինգշաբթի օրը մայրաքաղաքին մեծ տէրութեանց գեղականներուն առաջին թարգմանները Բ. Գուսն երթալով տեսակցեցան Մեծ-Եպարքոսին հետ :

Պուլղարացի ապստամբական շոր շարժման վրայ հետեւալ տեղեկութիւնը կը տեսնուի վագրթ լրագրին մէջ :

« Ապստամբական շարժումներ և բնան ելան, որոց կեդրոն կերելի Սամաքօֆ :

« Երկու հազար Պուլղար Սամաքօֆէն ճանաչ ելնելով՝ վեց իսլամաբնակ գիւղ կողոպտեց ու այրեր են : Եւէիքէօյի և Պրեճէնիցայի միջև հաղորդակցութիւնը կտրուի են :

« Մէնէլիքի, թրիշի և իմանի Պուլղարք ամբողջապէս սոք ելած են : »

Կըսուի թէ Ռուսիոյ կառավարութիւնը ծանուցեր է Բ. Գրան թէ այսուհետեւ վնաս, Տիրապէքիքի, Մուսուլի և Գանեայի մէջ ալ հիւպատոսներ պիտի գնեն :

Քաղաքային Ահմէտ փաշան այսօր Կ. Պոլսն կ'ապասուի :

Մայրաքաղաքի լրագրերէն մին կը ծանուցանէ թէ բարեխիղճ բըժիշկ մը՝ աղքատ կնոյ մը տունը այցելութեան կանչուելով, վարձքը կտնի իրի պահանջներ է և այն ալ սակի կամ տրամթ գրամ ըլլալու պայմանաւ :

Կը լսենք թէ հաշակաւոր Հայ բժիշկ մ'ալ իրեն գիմաղ հիւանդներէն մէկիտի կը պահանջէ եղեր և թղթադրամէ գատ ուրիշ ստակ չունեցողները չընդունիր :

Այս տեսակ բժիշկներն Սթամպուլ լրագիրն իրաւամբ առողջութեան վաճառական կանոնաւոր, որոց համար մարդատիրական զգացումը նշանակութիւն չունի :

Լոնտոնայէն քաջուած հետագիր մը կը ծանուցանէ թէ Բ. Գուսն աւարտութիւնն ու մարդասպանութիւնն ընդ Քիւրդերն ի մահ գատապարտելու արտօնութիւն տուեր է կարեւր մէջ կազմուած գաւառական յանձնաժողովին :

Կիւրդի վարչական օրէնացի Քըշ Եղա՝ փոփոխութեանց պարագնէն :

(Շար. տես թիւ 2183)

Յօդ. 10. Կղզւոյն ընդհանուր կառավարչն զատ՝ բոլոր պաշտօնատարը հաստատեալ կանոնադրութեան համեմատ պիտի տնտեսին : Սակայն՝ պէտք եղած հանգամանքն ունեցող ընկերները նախապատիւ պիտի համարուին :

Յօդ. 11. Եթէ ընդհանուր ժողովը տասնորդի տրոց հաւաքման համար թէ՛ կառավարութեան և թէ՛ ընտնաց աւելի օգտակար եղանակ մը գտնէ, կրնայ Բ. Գրան հաւաքութեանն ու վաւերացման ներկայացնել :

Յօդ. 12. Վերադարձ կղզւոյն տարիկանութիւնը կազմելու համար կառավարութիւնը տէրութեան կանոնաց համեմատ պիտի ընդունի կղզւոյն Քրիստոնեայ և Խալաք բնակիչներէն որոնք որ ստիկանութեան վիճակը գրեթէ ուղիւ և մինչև օր անոնց անբաւական ըլլալը չստուգուի, կայսրութեան ուրիշ բնակիչներէն չպիտի առնուին :

Ստիկանութեան գնդապետը կը զրո-

նական իշխանութիւնը պիտի անուանէ : Իսկ միւս սպանները կղզւոյն ընդհանուր կառավարչը պիտի ընտրէ՝ ըստ կանոնի՝ տեղւոյն Քրիստոնեայ և Խալաք բնակիչներէն, զորս նոյնպէս կեդրոնական իշխանութիւնը պիտի անուանէ :

Հանգստեան անտուկ մը պիտի տահմանուի ստիկանութեան զինուորաց և սպայից համար, և յատուկ կանոնադրութիւն մը պիտի չինուի այս նպատակաւ :

Յօդ. 15. Ծախսուց մէջ պատշաճ լընայութիւն մը մացնելու ջանք պիտի ըլլայ : Կանոնաւոր զօրաց ծախքը կղզւոյն գանձէն չպիտի առնուի : Նմանապէս մաքսը և աղի ու ծխախոտի տուրը կղզւոյն երեւմտից հաշուեցոյցին մէջ չպիտի անցնի :

Նոյնը պիտի ըլլայ նաև Էվլաֆի հաստից և ծախսուց համար, զոր կղզւոյն ընդհանուր կառավարութիւնը կը տնտեսէր և կուսակալութեան հաշուին մէջ կանցունէր : Այսուհետեւ զատ զատ պիտի մատակարարին :

Տեղական վարչութեան ծախքերը վար երթալէ ետեւ, գտն հաստից յաւելւածն երկու մասի պիտի բաժնուի, կէսը տէրութեան գանձը պիտի երթայ, և կէսն ալ հատարակաց օգտակար շինութեանց պիտի յատկանայ, այն է՝ նախ բանտերուն վերակազմութեան, երկրորդ վարժարանաց, երրորդ քաղաքային հիւանդանոցներու, չորրորդ ճանապարհաց, նաւահանգստից և այլոց շինութեան :

Այս շինութիւններն ընդհանուր ժողովոյ մէջ վիճարկութեամբ պիտի որոշուին :

Ընդհանուր ժողովն իւր տարեկան աւան շրջաններուն մէջ իրաւունք պիտի ունենայ քննելու թէ հասոյթներն ու ծախքերը կանոնաւորապէս մատակարարուած են : Եթէ պատահի որ հասոյթները չկրնան ծախքը գոցել, և կառավարութիւնն ամեն հնարաւոր ջանք ընելէ ետեւ չկրնայ հասոյթներն աւելցնելու միջոց մը գտնել և ամսականները չկրնան վճարուի, այս բացը գոցելու համար կայսերական կառավարութիւնն ստըլի գտն մար մը պիտի տայ, որ այն տարւոյն մաքսատան հասոյթին կէսէն աւելի չլընար ըլլայ :

Յօդ. 14. Թղթադրամը չպիտի բանի կղզւոյն մէջ : Պաշտօնէից ամսականները մեծապէս զրամով պիտի վճարուին :

Յօդ. 15. Թոյլ պիտի տրուի կղզւոյն մէջ կրթութեան յատկացման համար ընկերութիւններ կազմել, սակարաններ բանալ և լրագրեր հրատարակել տէրութեան օրինաց համաձայն :

Յօդ. 16. Եթէ դատարանաց անկախութեան, հաստատեալ օրինաց և վարչական կանոնաց հակառակ նախարարական հրամաններ զրկուին ի Վերադարձ, չպիտի դործադրին :

Առժամանակեայ որոշումներ Բ. Գուսն

(Ա) Ընդհանուր ներդրութիւն պիտի ըլրատարուի : Կո մնացած տարրերը ըլ պիտի պահանջուին : Իսկ սարտապան եղող վարձակալաց և տասնորդի հաւաքչաց նկատմամբ Բ. Գուսնն ասկէ առաջ զրկուած հրամաններուն համեմատ ընթացք պիտի բռնուի :

(Բ) Բնակիչը իրենց զէնքը պիտի պահեն, բայց առանց իշխանութեան հրաման ստանալու չպիտի կրնն :

(Գ) 1866ի աստատութիւնէն առաջ եղած սարտուց համար վերջնական կարգադրութիւն մը պիտի գտնուի, որպէս զի աղքատ սարտապանաց զիւրութիւն ըլլայ :

(Դ) 1866ի աստատութիւնեան տեղի գրաւեալ անարժ կառուածներէն զատ, եթէ վաճառուած սեփականութիւնը կան, տեղական իշխանութիւնը պէտք եղածն ընելու համար Բ. Գրան պիտի զովնէ :

(Ե) Քրիստոնեայ որոց Պաշտօններուն կանոնադրութիւնը կղզւոյն հինգ ժողովըրդապետութեանց կողմէ ներկայանալով, հոս քննուելէ ետեւ Բ. Գրան վաւերացուցանել պիտի ներկայացուի :

(Զ) յատուկ վիճակներ պիտի հաստատուին կղզւոյն մէջ այլ և այլ գրութիւններ և սեփականութեանց մարհակներ խմբադրելու համար :

Կիրիտի կղզւոյն վարչական օրէնաց

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ԳՐԵՅ

Ս.

Սոյն փոքրիկ երկատիրութիւնը, որ եղբարական սիրոյ ձօն մ'է, կը պարունակէ գողարկի խորհրդածուծիւններ, որ պատիւ կը բերեն երկատասարդ հեղինակին:

Կեդրոնատեղին է Սրապեան Պաղատասար աղայի գրատունը Մէրճան փողոց, և կը գտնուի նաև բոլոր գրատասարդաց քով: Գին մէկ հինգանոց թղթագրամ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի

Ի գեղարարական և գրական

յերուսաղէմ

Ի տարածանի Սրբոյ Յակովբեանց

Ամեն Հայ գրադատաւաց քով կը գտնուի, Գին 7 շրշ:

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

ԵՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՐ ԵՐ

1879 ԹՈՒԱՅԱՆԻ ԳՐԻՍՏՈՒ

Յօդակալ է Գրական-Պատմական Ս. Յակովբեանց

Յակովբեանց ի վրայ Սրբոյ Յակովբեանց

Ամեն Հայ գրադատաւաց քով կը գտնուի: Գին 100 փարա:

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

1879 ԹՈՒԱՅԱՆԻ ԳՐԻՍՏՈՒ

Յօդակալ յերեմիա քահանայէ Խաչատուր

Որ ամենայն գրադատաւաց կրպակ վաճառի: Գին 2 դահեկան:

ՆԱԽԱՆՈՒՄ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԵՐ

ԱՐՈՒՍՏՈՒՆ

Աշխատանքային Յակովբեանց

Ի տէր հանգուցեալ բարեկեցատակ սիրելի որդւոյ հեղինակած յիշեալ պատկերազարդ գրքովն որ մասնաւորապէս վարժարանաց համար յօդակալուած է, անկէք առաջ ունի զիւր պիտանա գրքով կը ծառայէ թէպէտ, բայց մտապէս զբաղող որ քան որք քարտէսաւոր նկատելով այսու հետեւ մէկ 10նոց թղթագրամի վաճառել որոշուած է ի գերութիւն գնողաց:

Կեդրոնատեղին է գրադատաւորատար աղա Սրապեանի գրատունը ի Մէրճան չառը: Ուրիշ Հայ գրադատաւաց քով ալ կը գտնուի: Աղգային վարժարանաց համար սովորական գնէն զեղ կըլլայ:

Յակովբեանց Յակովբեանց

ԳՐԱԿԱՆԱՆ ՏՈՒՄԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՐԱՆԻԿԱՆԱՆ ՏՈՒՄԱՐ

Որ պարունակէ

Փոխանակարի, Հայոց երգեր, Բեռնալերի, Վարժարի, Հայոց բանաստեղծաց և այլոց ձևեր և օրինակներ

Ի ՊԵՏԱ ՎԱՐՃԱՐԱՆՈՅ ԵՆ ՎԱՅԱՆԱՆ

Ի Ն. Կեդրոնատեղին

Տպագրեալ աղագրութիւն և ծովագրութիւն: Տպագրեալ Գրական-Պատմական Յակովբեանց Յակովբեանց ի Մէրճան չառը: Ուրիշ Հայ գրադատաւաց քով ալ կը գտնուի: Գին 100 փարա:


Գին 100 փարա: Գին 100 փարա:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԱՅԱՆԱՆ ԿԵՍՏԱՆ

Թարգմանեց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ իզմիրի Տէմէտեան եղբարց տպարանէն ի լոյս բնծայուածով, կը ծախուի Երեւանի Զինանոցի կրթչի ճառարանէն 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրադատաւաց քով: Գին 1 փարա 23 անթիւ:



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԵՆ ՍԿՍԵԱԼ

ՄԵՆՁԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and Բաժնեւորի Ինքնուրույն (Shareholder's Independent). It lists various dates and corresponding shareholder information.


Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent)

Table with 2 columns: Ժամ (Date) and Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent). It lists various dates and corresponding shareholder information.



ՋԵՐՄԻ ԴԵՂ

Տօբիմը Այերի Ջերմի գեղը աւան և և իցէ տեսակ Ջերմի խկոյն կը բռնէ: չկայ դեպ մի որ ասոր չափ օգտակար ըլլայ Ջերմի: Ջերմ բռնողները պարապ տեղը կը տանջուին քանի որ աս դեղը կայ պէտք է որ անմիջապէս անկէ գործածեն: Արդէն Պօլսոյ և Գաւառներուն մէջ ճանաչուած է աս դեղը ու անով բժշկուողները գիտեն անոր յարգը: Նախ ունի տարածի չափ հէշ Եւ զի խմելու է իւրեւ մաքրողական դեղ ու ետքը աս Ջերմի գեղէն (Ջերմը չառած) օրը չորս անգամ մէյմէկ անուշի գրգռչ ջուրի հետ խառնելով խմելու է անմիջապէս կանցնի: Տպագրեալ աւելի քիչ տպու է: Կը ծախուի Կ. Պօլսոյ Գաւառի Միջնաւան և ընկերաց Սմբ. Բիկայի մաղաղան:



ԱՆԿՈՂՆԱՐԱՆ ԿԱՄ ՄԱՀՃԱԿԱԼ

Այնքա և հասարակ քարեօջաններ երկաթէ և արդիւն, ածան գինեղով կը ծախուի: Կ. Պօլսոյ Գաւառի Միջնաւան և ընկերաց Սմբ. Բիկայի մաղաղան:



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իւրիւններուն ամենէն ազդէ տեսակը որուն մէջ կրտսը չը մարիւր և աղէկ կը գործէ, կը ծախուի Կ. Պօլսոյ Գաւառի Միջնաւան և ընկերաց Սմբ. Բիկայի մաղաղան:

Table with 2 columns: Ժամ (Date) and Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent). It lists various dates and corresponding shareholder information.

ԻՍԿԱԿԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent), Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent), Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent). It lists various dates and corresponding shareholder information.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent), Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent), Կաճառողի Ինքնուրույն (Shareholder's Independent). It lists various dates and corresponding shareholder information.

Այս քաղաքը շարունակ երեք անգամ կը հրատարակուի: Երեք շաբաթի, հինգ շաբաթի և շաբաթ օրերը: Բաժանորդագրուածներ անգին Կաւառի Միջնաւան ճառարանի թիւ 198, Կ. Պօլսոյ Գաւառի Միջնաւան:

Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգաբարձուաց անհեղինակները:

ԻԶՄԻՐ. Ստեփան աղա Տէմէտեան. ԿԵՐԱՄԻՐՈՒ. Խորոզ Ե. Կարիճեան. ՊՐՈՒՄ. Ստեփան աղա Թանկէրեան. ԹԵՐԵՐՍԱՂ. Տ. Սրբատեղեան աղա քահանայ Յիսակ: ՏԻՐԱՆՈՒ. Խաչատուր աղա Ստեփան ԿԱՐԵ. Կարապետ աղա Ստեփան քահանայ: ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան. ՄԱՆԵ. Մկրտիչ աղա Փօթիկեան. ԵԱՏ. Մ. աղա Խաչիկեան. ՅՈՒՐԵԱՆ. Յիսակ աղա Ե. Յիսակեան. ԵՐԶԱՆԱՆ. Թադէոս աղա Բագրատ ան: ՍԱՐԵԶԱՆԱՆ. Սրբ. Ստեփան. Երեւ. քաղաքի խաչատուր: Կ. Պօլսոյ Գաւառի Միջնաւան և ընկերաց Սմբ. Բիկայի մաղաղան:

ԽՐԴԱԿԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՍԿԱԿԻՏԱՆ

ՏՊԱԳՐԱՆ ԿԱՄ ՄԱՀՃԱԿԱԼ ԳԱՆԱԿԱՆ ՆՕՐՈ ԽԱՆ